


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

Ե. ՓՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ որևէ

գրութիւն պէտք է ուղղել աս  
Տեղին ԱՐՇԱԼՈՅՍ ԳՐԱԳՐԻ  
ԳԱԶԻՐԷ (Եգիպտոս)



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան սոյ դրոշմ	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԴ	
Տարեկան ձրակ	30
Վեցամսեայ	12

E. TOROSSIAN  
Direc.-propr. du journal arménien  
ARHALOUCHE  
LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆՈՒԿ  
ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ԺԱԽՔԸ  
ԽՈՐԱԳՐՈՒՄԵԱՆ ՎՐԱՅ Է :

ԽՈՐԱԳՐՈՒՄԵԱՆ ՈՂՂՈՒՄԸ  
ԳՐԱՅԻՆՔ ԵՍ Հ'ԵՆ ՏՐԱԽՐ

Ս.ԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆԻ  
Կանխիկ վճարելի են

ԳՈՐԾ ՓՆՏՈՒՈՂՆԵՐՈՒՆ

—\*—

«Արշալոյս» ի ծաւալը առաջիկայ եր-  
կարք շրջանի սկիզբէն (1 Օգոստոս) 5 սի-  
նակներու վերածել որոշուած ըլլալով, գը-  
րաշարներու պէտքը զգալի պիտի լինի. և ո-  
րովհետեւ Եգիպտոսի մէջ այդ արհեստին  
հետեւողները հազուագիւտ եղած են՝ ասկէ  
առաջ տպագրութեան գործը շատ սահմա-  
նափակ լինելուն համար. հարկ է որ գրա-  
շարութիւնը այլ ևս արհեստներու կարգը  
անցնի և անորով զբաղողներ գտնուին :

Աստի անոնք որ կը փափաքին գրաշա-  
րութիւն ուսանիլ և իրենց պարուստի միջոց  
հայթայթել, թող դիմեն թերթիս Խմբագր-  
րատունը, ուր վարժ գրաշարի մը առաջնոր-  
դութեամբ քիչ օրէն արհեստի մը տէր պի-  
տի լինին :

ԱՆԵՐԵՒՈՒԹԱՑԱԾ ՀԱՏՈՐԸ

—\*—

Կեցի՛ք. մի՛ շուտիք անմիջապէս ինք-  
նիքն աներևութացած բան մը չէ, որչափ  
որ ալ վերոյիշեալ երկու բառով անոր պատ-  
մութեան համառօտութիւնը ընել ուշ ենք :  
Թէպէտև շնչաւոր էակ մը չէ աներե-  
ւութացողը, թէպէտև ոտք ու ձեռք չու-  
նի, սակայն ձեռնածոններէն կրնայ ձեռք  
փոխ առնել և երկոսանիներէն ոտք, ու  
այդպէս կծիկը դնել Առաջնորդարանի . . .  
Թէրէքէներուն տաղտուկ պատճառով սըն-  
տուկներէն :

Անշուշտ բան մը չը հասկցաք տակաւին  
«Աներևութացած Հատորին» ինչ ըլլալէն .  
ուրեմն պատմեմ ձեզի եղելութիւնը, որ  
մեզի նամակաւ մը հաղորդած է ծանօթ  
անձնաւորութիւն մը՝ նոյնչափ ծանօթ մեր  
առաջնորդարանին ալ :

—«Տը. Ստեփան Ունճեան անունով մէկը  
քանի մը ամիս առաջ Գահիրէի մէջ իւր  
պարտքը կը վճարէ . . . հոգին տալով :  
Իր գոյքերը ըստ սովորութեան առաջնոր-  
դարան կը փոխադրուին և քերէֆներուն  
անուակին մէջ կը զետեղուին : Մայիս 22  
ին մէկ երկու սրճարաններու մէջ կախուած  
ալգարարութեանց համաձայն, որոնք Ա-  
ռաջնորդարանի կնքով և վաւերացմամբ  
պաշտօնական շապիկ հագած կ'ըլլան, ա-  
ճուրդը տեղի կունենայ քանի մը թէրէքէ-  
ներու, որք քանի մը ատենէ ի վեր Առաջ-  
նորդարանի բանսը դրուած էին . . . վը-  
տութեան դատապարտուելու համար :

Ահա ատոնց մէջ կը գտնուի եղբի Տը.  
Ունճեանի գոյքերն ալ, որուն մէջ կայ ե-  
ղբի՝ ինչպէս նամակագիրը կը հաստատէ,  
մեծարժէք չքնադագիւտ ձեռագիր հա-  
տոր մը :

Հանգուցեալ Տօքթօրին ալգականնե-  
րէն մին, որ Գահիրէ կը գտնուի, նամակ  
մը կ'ստանայ հանգուցելոյն միակ թաւան-  
գորդէն՝ յայտնող որ Առաջնորդարանէն ստա-  
նալով ձեռագիր հատորը, իրեն զրկէ իբր  
իր հօրը անմահ յիշատակը. ու այդ պատ-  
ճառ կ'ըլլայ որ նամակընկալը սրճարանէ մը  
սեղեկանալով երթայ ներկայ գտնուի թէ-  
րէքէներու աճուրդին և զարմանօք տեսնէ  
թէ՝ հանգուցեալ Տօքթօրին գոյքերուն  
մէջէն ձեռագիր հատորը աներևոյթ ե-  
ղած է . . . » :

Ահա ասիկ ամբողջ պատմութիւնը. հի-  
մայ ամեն ոք հասկցաւ թէ խնդիրը դարձ-  
եալ քերէֆներու շուրջը կը դառնայ :

Այս նիւթին վրայ, որչափ կը յիշենք,  
անգամ մը գրած և մեր առաջնորդարանի  
ուշագրութիւնը հրատարած ենք թէրէքէնե-  
րու մէջէն առանց վերջին դատաստանին ըս-  
պասելու յարութիւն առնող իրեղէններուն  
վրայ . սակայն երեկ թէ առաջնորդարանի  
վարչութիւնը՝ որ աւելի Վարդապէտ կ'ըլլեն,  
իրեն նախապաշարում ըրած է «Արշալոյս» ի  
գրածները չ'ըսել ձեռնալ, և թերևս այդ  
խիկ է պատճառը որ անցեալ օրեր առաջ-  
նորդարանի գրագիրներէն մին, տեղ մը կը  
պարծենայ եղբի թէ՝ «Արշալոյս» որչափ ալ  
ճշմարտութիւններ երևան հանէ, ես այն-  
չափ իմ տեղս կը հաստատուիմ և ամսակա-  
նի ալ պարբերաբար յաւելում կ'ստանամ : »

Եթէ մեր պարոն գրագրին խօսակիցը  
նոյն օրը չ'պատասխանէր որ «ստով քու ար-  
ժանիքը ցոյց չ'ես տար՝ այլ այդ շնորհք քե-  
զի ընողներուն հետ աղտոտ . . . կապերով  
կապուած ըլլալդ» այժմ միեւնոյն բառերը  
մենք հրապարակու ընելու պիտի պարտա-  
ւորէինք :

Իայց ինչ որ է, մեր արդի խնդիրը ա-  
ռաջնորդարանի գրագիրներովը զբաղել չ'է,  
այլ անոնցմէ մէկուն կամ միւսին գիտակ-  
ցութեամբ հանգուցեալ Տօքթօրի թէրէքէ-  
նի մէջէն աներևութացած մեծարժէք ձե-  
ռագիր հատորին վրայ է :

Մեր Գեր . Առաջնորդը պէտք է լաւ  
գիտնայ թէ՝ ամենէն շատ զժգոհութիւն-  
ներ պատճառով և ամենէն շատ անկանոն  
պայմաններու տակ կատարուած գործողու-  
թիւն մը եթէ կայ Առաջնորդարանի մէջը  
կամ դուրսը և կամ քովիկը, այն ալ ի մէջ  
այլոց՝ քերէֆներուն գործն է, որ հարկ է

օրինաւոր կարգի ու կանոնի տակ դնել,  
որպէսզի մեանդներուն աչքը ետեւը չ'մնայ  
ու չի մտածեն որ իրենցմէ վերջ իրենց գոյ-  
քերը ցեցակեր . . . կը լինին :

Իսկ «Աներևութացած Հատորին» համար  
ալ՝ կարժէ որ ամենախիստ քննութիւն մը  
բացուի, ստուգելու համար թէ այժմ թէ-  
րէքէի պաշտօնականներէն որո՞ւն քով մոռ-  
ցուած է նա, և ստանալով անկէ կամ լա-  
ւագոյն է ըսել՝ բռնի առնելով, զրկել  
հանգուցելոյն ընտանիքին, որ ի Պօլիս ան-  
համբեր կ'ոպասեն եղբի ժամանմանը՝ «Ա-  
ներևութացած Հատորին» :

Ե .

ՆԱՄԱԿ ԳԱԶԻՐԷԷՆ

ԵՐԿՐՈՒ ԽՕՍՔ «ՆՈՐ ՕՐ» Ի

(Շաբ. և Եգիպտոսի քիւիկ և վերջ)

Բոց աստի կայ նաեւ յետագայ միջազգայն  
որն շարժառիթ եղած է յիշեալ յօգուածագրին  
չահանդրութեանը և հետեւաբար աղտոտ ու  
ճգնիմ զրիչ մը գործածելուն, ինչ որ աւելորդ  
չ'ենք համարել ծանօթացնել աշխիւ ընթերցող-  
ներուն :

Չտակէն քանի մը շաբաթ առաջ Գալատ-  
եան վարժարանի աղքատ ուսանողաց հագուստ  
չինելու համար հանգանակութիւն մը բացուած  
էր Ս. Առաջնորդին հրամանաւ և ձեռամբ Արթ.  
Տէր Մամբրէ և Տէր Եգիպի քահանաներուն . ո  
րոնք տունները պարտելու ասնն, երբ Գրիգոր  
էֆ. Եղիաեանի տան դռնէն ներս կը մտնեն՝ ճիշտ  
այդ պահուն մեր պարոնը դուրս կ'իլլէ, կար-  
մբելով մեր քահանաներուն կը մօտենայ .

—«Ներեցէք Տէր Մամբրէ հայր, առանց կա-  
նուխէն ձեզ դիմելով ձեր կարծիքը առնելու, ի  
նպաստ գիշերային դատախօսութեանց (ի միւս  
անգամ գալստեան Մ. Յ. ) արուած ներկայաց-  
ման համար էֆ. ին դիմեցի, (անշուշտ բան մ'ալ  
անկից կորզելու համար Մ. Յ. ) և որպէսզի  
վստահութիւն ներշնչեմ, Տէր Մամբրէ հայրն ալ  
2 ոսկի դրուած է ըրի, կ'աղաչեմ եթէ ձեզ բան  
մը հարցնէ, զիս պզտիկ մի ձգէք : »

Տէր հայրերը ծիծաղելով վեր կ'իլլեն ուր  
որ եւ է խօսակցութիւն սեղի չ'ունենար յիշեալ  
խնդրոյ մասին, Չմոռնանք ըսելու թէ այս բա-  
նբեր իր ասանբէց քահանային ներկայութեան  
կ'ըլլան :

Քանի մը օր յետոյ պարոնին գրագէտ գոր-  
ծակատարը Տէր Մամբրէ հայր կը ներկայացուց  
երկու ոսկուոյ ստացագիր մը. (մի՛ խնդաք, կա-  
ղաչեմ, բարոյականով սկսուած գործ մ'է Մ. Յ. )  
Տէր հայրը կը մերժէ առարկելով թէ ո եւ է  
պարտք չ'ունիմ : Բնականաբար անխօսութիւն  
պիտի ըլլար մէկու մը քսակը պարարտացնելու  
և կամ պիւտճէն գոցելու համար 2 ոսկի վճա-  
րելը :

Ու այդ օրէն Տէր Մամբրէն վատ եղաւ, ու

բովանակելու իւր ծուղակը չ'իմիտել . հետեւաբար զսա մը սառլ ուխտեց ու Չասկի յաջորդ շար- թուն « Տնօրէնէք » վերնագրով ստալոյ ամբաս- ասանութիւնը հրապարակ նետեց : Կը հարցնենք թէ ինչո՞ւ այդ սննդը որչա կերպով չը ներկայեց որ Առաջնորդ Սրբազանը տնօրինութիւն մը ը- նէր, ուրախ կ'ըլլանք եթէ այժմ իսկ յայտնէ : Յաւալի է սակայն որ « Նոր-Օր » ի նման թերթ մը ինքնիրեն թոյլ կուտայ ժողովուրդի զարգացումը իրեն նպատակ ունենալ, եւ կ'ելլէ անամօթաբար իրեն կողմէ քահանայ մը, նո- րա Մշտիքը ըլլալուն վրայ յերկու, սակայն պէտք է գիտնայ եւ զգայ թէ անհատի մը դէմ այս- պիսի որակաւորութիւն տածելովը, ամբողջ գա- ւառի մը իր հայ եղբայրները կ'անարգէ, որոնք թէպէտ Բիւրտ միջավայրի մէջ կ'ապրին եւ աը- գէտ են, բայց իրմէ շատ աւելի արժանիք ու- նին, որովհետեւ անոնք իսկապէս հայեր ու ան- կեղծ հայաստանցիներ են :

Սե. գործը, զոր յառաջ կը տանի եւ որ ժո- ղովուրդով սկսած է, անձնական շահանդու- թեանց ու էնթրիկներու ծառայեցնելովը չենք կարծեր որ իր յուսացած կերպով վերջացած է, եւ եթէ, ուրիշ իրաւունքը չորթելով կոնակը Շնթիկի տուած միասնակցութեամբ ծաղրել ու ժող- վուրդը խաբել կը կարծէ, կը սխալի : Աւելի լաւ չ'էր ըլլար վարդուրի անցեալ ու ներկայ կեղ- տատութիւնները որոնք այս առասկա առթիւն- րու մէջ աւելի նողկալի, ի յայտ կ'ընան զայ : « Նոր-Օր » թերթը՝ Լատարն-Բնթերցատուն Բնկ. անգամայն հաստատած ին համեմատ, յանձ- նուած է Ն ամեայ պայմանագրութեամբ՝ Ա. թուոյն մէջ զծուած ծրագրով ընթանալու պայ- մանաւ : Ինչո՞ւ կը մոռնայ թէ անհատական թերթ մը չ'է իւր ձեռքը եղածը, թէ՛ն թաքուն շարժումներով կորզուող հաճոյքը կը վայելէ մինչեւ ցարդ :

Այդ տեսակ անիմաստ ու անարդար շարա- րանութիւններն ժողովուրդին դժգոհութիւնն ու պիտանք առթիւն զսա ուրիշ բանի մը չ'են ծա- ոայիք, անտարակոյս կարգադրող կարող է դա- տել, ժողովուրդը արդէն իսկ փորձը տուած է թէ հետամուտ է իւր շուրջը զարձաններուն : Թէպէտեւ չ'էր արժեք այսպիսի կ'ըզտող գրքով զբաղել եւ նոյն իսկ պատասխանել, քա- նի որ ինչպէս ըսինք, ժողովուրդը գիտէ գա- տել, բայց ստիպուեցանք զգացնել իրեն թէ լաւ է որ իր շարժմանը, զի ժողովուրդին հետ խաղալով օգտուելու ուղիք, ո'չ միայն վատու- թիւն՝ այլեւ միշտ անյաջողութեան դատապար- տուած է :

Յ. ԲԻՒՐԻՃԵԱՆ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ANCH' IO SON TOMO (ԵՍ ԱՂ ՄԱՐԿԻ ԵՄ) (2)

Ա.

Փաւտացեաց զէպ յ'Ամերիկա գաղթելու հայրենաւթեան ձեռնարկը որ տարիներէ ի վեր կը գործադրուէր կը սաստկանար այն օրերը, Ամեն շարժք քսան երեսուն եւ երեսնիս աւելի թուով հայեր, արք եւ կանայք եւ մանկտի իրենց գոյ- քը, արքը, տունը գրեթէ ոչինչ գնով ծախած կը չուէին օտար երկիր : Բայց Գուժ-Պարոնի զէպէն ի վեր կառավարութիւնը խիստ միջոց- ներու գիմնելով, այլեւս թուրքեր կը կանգնէր գաղթողներու այս հոսանքին առջև, ժամանակ մ'այնպէս եղաւ որ ծովը ծովուց զաւառա- ցիներ պարզապէս կը բանտարկուէին առանց հարցաքննութեան : Բայց եւ այնպէս անոնք որ տէրութեան գործին մարմինը գոհացնելու ճար- պիկութիւնը կամ կարողութիւնն ունէին, կ'ընա- յին չոզնաւ մասնէ առ երեսս ձեռակերպութիւնէ մը ետքը . իսկ անկարները կը թափառէին փո- ղոցներու մէջ, մինչև որ իրենց գոյզն զբամն ալ սպառելով անոք անօգնական մնային, եւ մուրալու սկսէին, կամ անկիւն մը կծկած մեռ- նէին :

Երբ իրաց այս վիճակն իմացան անոնք որ ճամբայ ելած էին կամ ելլել կ'ուզէին զէպի Ս. գալու, եւ անկէ եւրոպա անցնելու զիտաւորու-

ՎԵՐՋԱԼՈՅՍ

Տեսայ քեզ հո'ն... Երբ ինչո՞ւն վրայ... գանգուր վարկերու մէջ թաղուած՝ մեղամարտ ժպիտներ կը սփռէ իր... Ժպիտներ անուշ, թըր- թուուն, որք գարնանային ծաղիկներու պէս ան- բիծ՝ կը փթթէին չըթներէդ, պարուրելով հոգիս սիրով մը... հիւժիւն... սպասիչ... :

Պահ մը արբշտ դիտեցի քեզ... յուշիկ մը վերացաւ հոգիս խոկմանցս դարձանք կոհակներ- րուն մէջէն... սիրեցի քե'դ... ու չնչեցի կեան- քը... կեանք մը անուշ, թուրի... երազներով յերբերուած :

Ապրեցայ վայրկեան մը հոգեւոյ հմայիչ վէտովեաններուն մէջ, ու որտեղ կաթիլներով լուսացի գանգուրները հրաքանչ... ուղեցի մա- րել անստոյգ էութիւնս սիրոյ ամենի երեւելուն- րուն մէջ, որք կը փոխադրեն հոգիս... հո'ն... Ժպիտներու թուրասանը... :

Անձայր երազներու մէջ ընկզմած էի... տեսայ մեկնիդ կամայ կամաց... սիրտս ուռե- ցաւ, ու յիշատակներու հեղեղ մը սկսաւ կաթկը- թիլ աչքերէս... փշրելով կեանք մը այնքանի կարճ... այնքանի անուշ... :

Պահ հանգչէ՛ ո'վ տիեզերքի պոյժատու թիւն տանելով հետք բոլոր յոյսերս անուշ... :

ԱՐՏԱՇԷՍ ՄՍՐԼԵԱՆ

ՆՈՐ ԼՍԱՐԱՆ ԸՆԹԵՐԳԱՏՈՒՆ

... Խմբագրութիւն « Արշալոյս » Արագրի Աստ

« Լատարն Ընթերցատուն » Ընկերութեան Գործ. Ժողովս կը խնդրէ որ հաճեք հրատարա- կել ներքինեալ յայտարարութիւնը, որ ինքնին սերտ յարաբերութիւնն ունի ժողովուրդի կենսա- կան շահերուն հետ :

Ընդունեցէք եւս . հեւն :

Ի Իրմաց Գործ. Ժողովոյ Լատարն-Ընթեր- ցատուն Ընկերութեան Ատենապետ Ատենապետ Կ. ԵՐՁԵԿԱՅԵԱՆ Ս. ՕՏԱՊՍՇԵԱՆ

Թեամբ, փոխանակ ուղղակի կառավարութեան պաշտօնէն զիմելու՝ իրենց համար օգտակարա- զօն համարեցին գործել եւ նաւ մասնէ յայ գոյ- ծակատարներու միջոցաւ . չ'խորհելով որ ան- շահախնդրութիւնը հարգազրկութիւնն է, եւ միջնորդներու թիւը քանի՜ աւելնայ ծախսն ալ համեմատաբար կ'աւելնայ : Փաւտացեաց այդ որոշումը շահու յորդանոս աղբիւր մը եղաւ հայ գործակատարներու համար, որոնց ափին մէջ կը թափուէր խեղճ վատարներինը հօրենական կարուածոց գինը, աւաղակներու ձեռքէն պրծը- ուած մասը : Իւրաքանչիւր գաղթական կը վճա- րէր 13 օսմանեան ոսկեայ դումար մը, որուն 60 Ֆրանքը միայն կը տրուէր չոզնաւային ընկե- րութիւններու իրրու նաւով սրճ, եւ մնացածը գործակատարներու եւ պաշտօնակալներու մէջ կը բաժնուէր : Բայց կ'իրեւայ որ գաղթական- ներէն օմանք՝ ո'չ այնքան շնորհապարտ իրենց կողպտուելուն համար՝ Մարտէյի հասնելէն ան- միջապէս ետքը, իրենց հայրենակիցներուն աը- դարարութիւններ ուղղեցին Արմենիա լրագրոյն միջոցաւ . ազգարարութիւններ՝ որոնցմէ մեծա- պէս օգտուեցաւ նաեւ Ս. Ի կառավարիչը, ինքն ալ իր կողմէն բանտարկելով, լլկելով եւ կողպա- տելով յայտնի եւ՝ ասոնց խոտովանութեան շնորհիւ՝ գաղտնի կողպախիչները :

Եւ որովհետեւ բանտարկութիւնը օրինա- ւոր նկատուելու համար պէտք էր նաեւ խու- կարիկութիւններ ընել տուններու խառնութիւնը եւ գրասենեակներու մէջ, այդ խուկարիկութեանց միջոցին գանուեցան մի քանի անիմաստ նա- մակներ՝ որոնց մեծ նշանակութիւնն արուեցաւ,

ԿՍՐԵԻՈՐ ԱՉԻ

Լատարն Ընթերցատուն Ընկերութեան Գործ. Ժողովը ուրախութեամբ կը ծանու- ցանէ արդոյ հասարակութեան թէ՛ Ընթեր- ցատուն բացուող տեղի պիտի ունենայ ա- ռաշիկայ կիրակի 9 Յունիս, առաւօտեան ժամը 10 ին Պէշն-էլ-Սուրէն Գանթարա Կէ- տիտ Թրէշներու ճրի վարժարանին կից շէն- քին մէջ :

Երկուսեւ ամեն կրթատէր ազգայիններ շերմապէս կը հրաւիրուին իրենց ներկա- յութեամբ պատուել սոյն հանդէսը, որով քաջալերած պիտի ըլլան այսպիսի հանրօ- գուտ հաստատութիւն մը՝ իր համեստ նա- խաքայլերուն մէջ :

Ընթերցատուն բացուողը զուգարէպ ըլ- լալով Ա. Պ. Սահմանադրութեան սարկ- դարձին, ճառայտութիւններ եւ երգից- ղութիւններ տեղի պիտի ունենան :

Գիւան Գործ. Ժողովոյ Լատարն Ըն- թերցատուն Ընկերութեան : (Կնեթ)

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

— Ն. Վ. Պօզոս փաշա նուպար, երէկ կէս օրին Մէսսաժրի ընկերութեան շոգեհա- ւով մեկնեցաւ Եւրոպա :

— Զակարիկի մէջ ժամտախտի երկու գէպքեր եւս տեղի ունեցած են :

— Մանուրայի մէջ եւս ժամտախտի գէպք մը պատահած է . տեղացի մը՝ որ եր- կու օրէ Զակարիկ կը գտնուէր . իր դարձին վարակուած է . բժիշկները ամեն զգուշու- թիւն ձեռք տուած են գէպքին առաջն առ- նելու համար :

— Մինեէի մէջ եւս ժամտախտի երկուցթ- ներ նկատուած եւ հաստատուած են պաշ- տօնապէս . նախարարական որոշմամբ Մինեէ քաղաքը ամառյս հինգէն ի վեր սկսած է զատարկուիլ :

Եւ Հնչակի մի քանի օրինակներ՝ որոնք նկատ- ուեցան իրրեւ գրօշակներ ապստամբներու ձեռ- քէն կորուած : Այս գիւտերը նկատուած կը հե- տապուէին նահանգապետին, որ իր հրամաննե- րը կը սաստկացնէր, ի մեծ ուրախութիւն ստա- րակարգիւններուն, որոնց խուզարկելու եւ կո- ղոպուելու եռանդը կը կրկնապատուէր :

Կառավարութեան պաշտօնակալներուն գաղա- նի նպատակներուն իրագործման մեծապէս սա- տարեց նաեւ ընթացքը բանտարկուել հայերու, որոնք՝ իրենց ընդունած « ես չ'էի, ան էք . ան չ'էր, ես էի » ի անձարակութեամբ, կամայ ակա- մայ աւելի անձեր կը յանձնէին ոտտիկանու- թեան, որ ուրախութեան կը խնդրէին :

Ծիրօլամո՝ անտարբեր այս ամեն խոռոչ- կութիւններուն՝ իր գործով կ'զբաղէր . եւ երբ՝ զիպուածով՝ ճամբուն վրայ հանդիպէր խուճը մը հայերու, որոնք բանտը կը տարուէին, ուշի- ուշով կը նայէր, եւ Աբգար աղան կը փնտռէր անոնց մէջ : Բայց միշտ յուսախար կղած էր :

— Ա՛հ, կը մըմտար Խալաթին, պղտիկս կու- տայի՛ ուս մարդուն կախուած ըլլալը տեսնելու համար :

Մարդը չ'կախուեցաւ, եւ ծիրօլամօ պզտի- կը տուաւ ծաղկախտին :

Բ.

Գիշերուան ժամը չորսն էր՝ ըստ թրքաց : Խիտ եւ անշուկ անձրեւ մը, նման նրբահիւս անուռն թելերու՝ ամպերէն զէպ յերկիր երկըն- ցած, կ'ողողէր Ս. քաղաքը : Փողոցներու մէջ անցուզարձը դադարած, եւ կրկիրը հոծ խաւար մը պատած էր :

—Իսմայիլիէի ջրանցքին մէջէն գտնուած է Հաննա Իպրահիմ անունով մարդու մը դիակը, որ մեծ քանակութեամբ արսէնի քիմիկատներ կը կրէ փորատիքին մէջ . այս դէպքը պատահած է խեղդուողի ամուսնութենէն երկու օր վերջը . խեղդուածի կինը ձերբակալուած է և կը հարցաքննուի :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Կ . Պօլիս 5 Յունիս . — Անդղիոյ նախարարութեան և Հայոց պատրիարքին կողմէ Բ . Գրան եղած դիմումէն անմիջապէս վերջ , Վանի Գիւրտերը սկսած են հայերու դէմ բռնութիւններ ի գործ դնել : Անվէրս 5 Յունիս . — Ընդարձակածաւալ հրդեհ մը աւերակ բրած է արքունական միտերանոցը : Բրէթօրիա 6 Յունիս . — Մայիս ամսոյ մէջ Հարաւ-Ափրիկէի մէջ տեղի ունեցած կորուստը եղած է 734 հոգի , որոնցմէ 25 սպաներ պատերազմի դաշտին մէջ և հիւանդութենէ մեռած են :

Խ Ա Ռ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

—Իտալիոյ մէջ Մէյն Մարկէրիտ անունով նորաշէն զրահար մը շուրջ իջուցած են վերջերս , Իտալիոյ թագաւորին , դուքսերուն , Մոնթէնէկիօի Մեռքօ դըքսին , բարձր մեծամեծներուն և ժողովրդի խուռն բաղմութեան ներկայութեամբ . այդ առթիւ մեծ ցոլցեր կազմակերպուած են և թագաւորը շերտազին ազազակներով գոհունակութեան արժանացած է : — Նիւ-Եօքսէն ստացուած հեռագրի մը համաձայն Հաւաքար Համալսարանի Բրոֆէսէրներէն Փիքսելիկ , որ մասնաւորապէս լուսնի վրայ ուսումնասիրութիւններ ընելու համար ձամայիք գնացած էր , բերած է կարգ մը լուսանկարներ , որոնք գործնապէս կը հաստատեն լուսնի վրայ ձիւնի ներկայութիւնը : Նա լուսանկարած է նոյնպէս

Յիւզեղեոյ փողոցը , բաղնիքի մօտ , լուսավառութիւն կար Աբդար աղայի տանը մէջ : Այս երանելին իր երջանակաւ ծննդեան քառասուն ու հինգերորդ տարեդարձը կը ածախմբէր ճոխ սեղանի մ'առջև՝ շրջապատու իրեններէն — քաղաքի հայազգի շոջերէն — որոնց՝ մինչև ցալդ՝ նախադասութիւնը մարմնացուցած էր անփոփոխ կերպով՝ իր մեծափառ և մեծափոր անձին վրայ : Հոն էր անխուսափելի Տէր Յովնաննէս , որ՝ իր բեռնաշարժութեան և հաւատարմութեան՝ ախար հովիւ՝ միշտ կը հետևէր հօտին գէր և ճարպալի մասին քանակաւ թողովով որ վախճանէր — որոնք կրնային խաշի իր ներկայութենէն — ճարակելու խտոր իրքինք պաննի՝ ուր որ կրնան , ազատ և ամեն հակողութենէ հեռու :

Հոն էր Մարկոս աղան՝ թագական խորհրդոյ գանձապետը , որ՝ շնորհիւ Աբդար աղային փշելուն իր վրայ կարողացած էր մի քանի տուներու , խանութներու աէրն ըլլալ :

Հոն էր նաև Դուկաս Էֆէնալին , լեզուանի և հնարագէտ փաստաբան , Աբդար աղային աջ թեւը : Մա Ֆրանտական մեծ յեղափոխական բանաձևին անվերջ գործադիրն եղած էր միշտ : Ազատութիւն՝ առնելու , հաւասարութիւն՝ պարտքերը կրէք չ'վճարելու և եղբայրութիւն՝ հանդէպ առատաձեռններու :

Եւ հիմայ , շնորհիւ կերակուրէն առաջ առատօրէն ստամոքսի մէջ ներմուծուած Մասթիքայի , և սեղանին վրայ շաշուած գինիի առնանացուցիչ ազդեցութեանց , գլուխները կը շոյրանային , միտքերն աւելի կը պղտորէին և

արեգական մայր մանելը և ծագիլը : Այս լուսանկարներուն մէջ բոլոր բարձրութիւններն ու խորութիւնները լաւ լուսաւորուած են . բուօֆէսէօրը առանց կասկածելու կ'ենթադրէ և կը հաստատէ թէ լուսնի վրայ ձիւն կայ :

Վ Ի Ճ Ա Ն Ա Յ Ո Յ Ց

Տարեկան հարցաքննութիւնների աշակերտաց և աշակերտուհեաց Գալատեան երկսեռ վարժարանաց և Մանկապարտիզի :

— 0 0 0 —

Տարեկան հարցաքննութիւնները՝ ըստ որոշման Մեծապատիւ հոգաբարձութեան՝ սկսուելու են առաջիկայ հինգշաբթի , ամսոյս 6 ին :

Իւրաքանչիւր օր՝ բացի կիրակէ և տօն օրերէ՝ տարեկան հարցաքննութիւնները՝ գատաժիշոցներ և զբօսանքներ ընելէ վերջը՝ դադարելու են երեկոյեան ժամը 5 ին :

Հարցաքննութիւններին ներկայ լինելու կը հրաւիրուին ամենայն հայ , ինչպէս այլ , նոյնպէս և կին մարդիկ՝ նամանաւնդ աշակերտաց և աշակերտուհեաց ծնողները :

ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

Հարցաքննուելու են նախ փոքր և ապա հետզհետէ աւելի բարձր կարգերի աշակերտները և աշակերտուհիները :

Յունիս 7 հինգշաբթի առաւօտեան ժամը 8 էն հարցաքննուելու են Մանկապարտիզի Ա . և Բ . կարգերի աշակերտները և աշակերտուհիները՝ հայերէն լեզուէ , թուարանութենէ , կրօնագիտութենէ , գծագրութենէ , իրագիտութենէ , վայելչագրութենէ և երգեցողութենէ :

Յունիսի 8 ին , առաւօտեան ժամը 8 էն սկսեալ՝ հարցաքննուելու են Մանկապարտիզի Գ . կարգի աշակերտք և աշակերտուհիք՝ կրօնագիտութենէ , հայերէն լեզուէ ,

և այլն : Երբ արեւը կ'ուենային :

Սոյնուանակ բացարձակապէս յոտակ և համեմատաբար հաղուաղէպ պարագաներու մէջ մարդիկ աւելի շահուէտ ի՞նչ կրնան ընել , եթէ ոչ խօսիլ այնպիսի նիւթերու վրայ , որոնցմէ հանրութիւնը պիտի օգտուի և զոր ապագայ սերունդը պիտի գնահատէ ամենայն անկեղծութեամբ , ազատ ըլլալով անձնաւորութիւններ խնայելու հոգէն և փափկանկատութենէն :

Այդ տօնախմբական ժողովին մէջ ալ , ուր՝ գլուխները՝ ինչպէս ըսինք՝ բաւական լեցուած էին , խօսակցութեան նիւթը կը կազմէին այն հրատապ եղելութիւնները որոնք հայութիւնը ցնցած էին արմատէն :

Ուրֆոյսի փողոցներուն մէջ արիւնը տակաւն չորցած չ'էր . Մայր եկեղեցւոյ հիմունքը դեռ կը միտային , և հազարաւոր դիակներ իրենց վերջին կայանին կ'սպասէին :

Բաղաքակրթութիւնը սոսկացած էր , և ազգերը պահ մը չուարեցան : Հրապարակապիւրները կատարած էին , ուսմիկը բորբոքած և խաշակրաց նոր արշաւանք մը յղացուած էր . բայց դիւանագէտներն ու վեհապետները թեւերին խաշաձեւած կ'սպասէին . . . ի՞նչ բանի . . . :

Անգղիական թերթերուն մէջ մանաւանդ Տեյլի թեղիկաբէն էր որ բոց ու կրակ կը սեղացնէր Օսմանեան կայսրութեան գլուխը : Այդ թերթին թղթակիցը , որ ծպտեալ կ'այցելէր — կ'ըսուէր — ամբողջ հայաստանը , աղեխարջ նկարագրութիւնները կ'ընէր այն անուր խժոժութեանց , տանջանաց որոնց կ'ենթարկուէին արք և կանայք , ծերք և տղայք :

թուարանութենէ , իրագիտութենէ , ձեռագործութենէ , գծագրութենէ , վայելչագրութենէ և երգեցողութենէ :

Յունիս 9 և 11 ին , առաւօտեան ժամը 8 էն հարցաքննուելու են Գալատեան վարժարանի Ա . կարգի աշակերտները՝ կրօնագիտութենէ , բարոյագիտութենէ , թուարանութենէ , հայերէն , արաբերէն և անգղիերէն լեզուներէ , գծագրութենէ , վայելչագրութենէ և երգեցողութենէ :

Յունիս 12 և 13 ին , առաւօտեան ժամը 8 էն հարցաքննուելու են Գալատեան վարժարանի Ա . կարգի աշակերտուհիք՝ կրօնագիտութենէ , բարոյագիտութենէ , թուարանութենէ , հայերէն և անգղիերէն լեզուներէ , ձեռագրութենէ , գծագրութենէ , վայելչագրութենէ և երգեցողութենէ :

Յունիս 14 և 15 ին , առաւօտեան ժամը 8 էն հարցաքննուելու են Գալատեան վարժարանի Բ . կարգի աշակերտները՝ կրօնագիտութենէ , բարոյագիտութենէ , ազգային պատմութենէ , թուարանութենէ , հայերէն , արաբերէն , անգղիերէն և գաղիերէն լեզուներէ , գծագրութենէ , աշխարհագրութենէ և երգեցողութենէ :

Յունիսի 18 և 19 ին , առաւօտեան ժամը 8 էն հարցաքննուելու են Գալատեան վարժարանի Բ . կարգի աշակերտուհիները՝ կրօնագիտութենէ , բարոյագիտութենէ , ազգային պատմութենէ , թուարանութենէ , հայերէն անգղիերէն և գաղիերէն լեզուներէ , գծագրութենէ , աշխարհագրութենէ , վայելչագրութենէ , ձեռագրութենէ , երգեցողութենէ և ձեռագործութենէ :

Յունիս 20 , 22 և 23 ին , առաւօտեան ժամը 8 էն հարցաքննուելու են Գալատեան վարժարանի Գ . կարգի աշակերտները՝ կրօնագիտութենէ , բարոյագիտութենէ , ազգային պատմութենէ , եկեղեցական պատմութենէ , թուարանութենէ , երկրաչափութենէ , տօնարակալութենէ , հայերէն , արաբերէն , անգղիերէն և գաղիերէն լեզուներէ ,

Տեյլի թեղիկաբէ մանրամասնօրէն կը պատմէր այս արեւնալի մարտիրոսութիւնը և կը սպասուար , ի՞նչ կ'ըսեմ , օրուան խնդիր կ'ընէր թերթական տէրութեան սպասուող ջնջուելը :

Անկեղծօրէն կը խորհէին և կը գրէին անգղիական թերթերը , թէ կարգախօսի մը կը հնարանդէն պարզապէս : Թէև ապուրի կատարելապէս լուսաբանուած չ'է այս կէտը , սակայն հիմնուելով այն դերին վրայ , զոր բխատանական մամուլը կատարեց՝ այս անգամ խղճմտօրէն՝ Թրանսլատակական պատերազմին միջոցին — պատերազմ՝ որ երբէք պատուաբեր հանգամանք մը չ'ունեցաւ և չ'էր ալ կրնար ունենալ երկրիս հզօրսոյն պետութիւններէն միոյն համար — ներկի է մի քիչ վերապահութեամբ ծափահարել այն մարտիրոսական զգացմանց , որոնք անոնց սիւնակներուն մէջ կ'արտայայտուէին :

Ինչ որ ալ ըլլայ , ուս ճիշտ է որ ամենքնիս ալ խաբուեցանք , հմայուեցանք՝ տառել կամ նուազ :

Եւ ժողովուրդը՝ որ չ'արմատաբաներ՝ սխաւ իրարու աւետել , — լսեցի՞ր . . . Լորտ Սոլդպէշին այսօր տներ տուեր է . . . մարդուս դեպանին , անանկ որ խեղճ գեսպանը լայով դուրս է ելեր :

աշխարհագրութենէ, գծագրութենէ, վա-  
յելչագրութենէ և երգեցողութենէ :

Յունիս 25, 26 և 27 ին, առաւօտեան  
ժամը 8 էն հարցաքննուելու են Գալատեան  
վարժարանի Գ. կարգի աշակերտուհիները՝  
կրօնագիտութենէ, բարոյագիտութենէ,  
աղբային պատմութենէ, թուաբանութենէ,  
հայերէն, անգղիերէն և ֆրանսերէն լեզու-  
ներէ, աշխարհագրութենէ, գծագրութենէ,  
վայելչագրութենէ, երգեցողութենէ, ձևա-  
գիտութենէ և ձեռագործութենէ :

Յունիս 28, 29 և 30 ին, առաւօտեան  
ժամը 8 էն հարցաքննուելու են Գալատեան  
վարժարանի Գ. կարգի աշակերտուհիք՝ կը-  
րօնագիտութենէ, բարոյագիտութենէ, աղ-  
բային պատմութենէ, թուաբանութենէ,  
երկրաչափութենէ, հայերէն, անգղիերէն և  
ֆրանսերէն լեզուներէ, ձեռագործութենէ,  
ձևագիտութենէ, վայելչագրութենէ և եր-  
գեցողութենէ :

Առաջիկայ Օդոստոսի 27, 28, 29, 30 և  
31 ին լինելու են հին աշակերտաց և աշա-  
կերտուհեաց վերաքննութիւնները, իսկ նո-  
րեկները քննութիւնները և ընդունելու-  
թիւնքը համապատասխան դասարանների  
մէջ :

Առաջիկայ ուսումնարանական տարուայ  
դասախօսութիւնները սկսուելու են սեպ-  
տեմբերի 3 ին :

Հանգուցեալ կարապետ Գալատեանի  
յիշատակը Գահիրէի հայ ժողովրդոց և ու-  
սանողաց մէջ միշտ վառ պահելու համար  
որոշուած է պարզեւարաչափութեան օրը ընել  
15ն սեպտեմբերի, որովհետև բարերար կա-  
րապետ Գալատեանը հիմնած է իւր ուսում-  
նարանը 1854 թուականի սեպտեմբերի 15  
ին :

Տեսուչ Գալատեան երկու սեուի վար-  
ժարանաց՝  
3 Յունիս 1901 Գահիրէ

**ՄԹԱՌ ԼԱՅՔ**

ԼՈՆՏՈՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնուեալ 1843

Բացարձակ ապահովութիւն. — Չափա-  
ւոր ապահովագրիւն. — Ապահովագրի հնու-  
թեան համաձայն շահու առաւելութիւն. —  
Իրաւանց պահպանութիւն՝ ապահովագրի վը-  
ճարմանց յապաղումի պահուն. — Չափող  
պարագաներու մէջ անմիջական հաշուեյար-  
գարութիւն. — Նահու բաժանում ամեն Հինի  
ՏԱՐԻՆ մէկ անգամ :

**Ս. ԱԲՕՆԱՐ**

Ընդհանուր ներկայացուցիչ եգիպտոսի

ՀՅԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ  
ԿԻՐԱԿԻ 2 ՅՈՒՆԻՍ 1901

2391	7743	3391	6945	5539	213
317	767	1307	1897	2413	2353
2887	3639	3770	4761	4994	5664
5765	5952	6424	6709	8352	8712
		8899	9060	9602	

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

**ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ**

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԵՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ  
ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԳՐԱՄԱԳՆՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 563 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժ-  
նէ ամենէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն  
վճարած է կամ ի նպաստ իրենց գու-  
մարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝  
որ գրեթէ աշխարհի ուրիշ օրեւէ ըն-  
կերութենէ մէկ միլեար աւելի է :

ԳԷՈՐԳ ԵԿԱՒՕՑ ներկա-  
յացուցիչ ի Գահիրէ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ օր  
և է ընկերութենէ աւելի երաշխա-  
ւորութիւններ, ընդարձակ գործառ-  
նութիւններ և հասարակ վրայ ա-  
ւելի ապահովագրութիւններ ունի և  
աւելի ապահովագրին կը գանձէ :

ԱԼԷԲՍԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր  
գործակատար յ'Աղբ քսանդրիս :

**Ս Ի Ն Կ Ե Ր**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԵՐ

Պալատի փողոց. Խազնետարի սեփականութիւն, Պրիսթլ Սթրիթ Լոնտոն, Գահիրէ  
Գահիրէ Եր Լա Պուրսի կից :

Հին եւ նոր ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՒՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՉ 6500 ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԵՐ ներքն են և ասոնցմէ մինչև ցարչ  
17,000,000 ծախուած է :

400 և աւելի վկայականներով և մեքայներով վարձատրուած, երաշխաւորեալ մեքենաներ :

ԱՄԵՆԵՆ ՄԵՆՎ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ


Փարիզի 1900 ի Տիեզերական առաւելուսանակիսի մէջ ստացած է :

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ  
ԱՐՔՈՒՆԻՔԻՆ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՑԻՅԱՅՍԵՐԱԿԱՆ  
ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵԱՑ

ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Բ. ԱՅԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ,  
ուշագրութիւն գարձնել իւ-  
րաքանչիւր մեքենայի վրայ  
ՍԻՆԿԵՐ ի յասկանչիմ :



Չրի դասեր և նորոգու-  
թիւններ, ՍԻՆԿԵՐ մեքենա-  
յից համար, յաճախորդաց  
տուններուն մէջ :

Վճարմանց Դիւրութիւն

Փոխանակութիւն հին մեքենայից  
եւ նորոգութիւն ամեն կարգի  
Մեքենայից

Գին ՉԱՓԱՒՈՐ

**ԿՕՇԿԱԿԱՐ**

Գ. ԵՒ Ց. ՊԵՇԻՐԵԱՆ ԵՂԱՐԱՐԻ

Պազար-Մուրուր թիւ 39

Կուզէ՞ք ունենալ հմուտ վարպետի  
ձեռքէ ելած, ֆրանսական նորաձեւութեանց  
համապատասխանող, ոտքերը կոշտերու ցա-  
ւերէն աղատ պահող և դիմացկուն կօշիկ-  
ներ :

Գիմեցէ՞ք ի Պազար-Մուրուր թիւ 39  
խանութիւն մէջ հաստատուած Պէշիրեան եղ-  
բարց, որոնց գործածած ապրանքներու տո-  
կունութիւնն և ձեւերու մասին ունեցած հո-  
գածութիւնը ամեն տարակոյսէ վեր է :

Պէշիրեան եղբարք իրենց յաճախորդաց  
ըրած յանձնարարութիւնները փութով և  
մեծ խնամով կը պատրաստեն :

Բաւ է միայն մէկ անգամ դիմել ի-  
րենց. ապահովապէս մնայուն յաճախորդ-  
պիտի լինիք :

**ԲԱՐԻՈՒՑԻ ԸՆՏԻՐ ԱՆՈՒԻ**

Ունէին՞ք մինչև ցարչ հայ մը որ գիտնար  
մտածել թէ՞ ամուսին ալ մեծաքանակ սպառում  
կ'ունենայ և կրնայ կարեւոր շահ արտադրել :

Առեւտուրի այդ ստապարէզն ալ օտարներուն  
թողուած էր :

Տիար Յակոբ Վարդանեան (Սանտեսանի  
քեռորդի) այժմ ամենաբնորոք ամուսին վաճա-  
րականութեամբ կ'ըզադի և մրցում բացած է  
օտարներուն դէմ :

Գիմեցէ՞ք իր միերանոցը Սուգ-Սուտար  
թիւ 17 և 18 :  
Անխարդախ կշիռ և չափաւոր գին :

**ՍԱՍՈՒՆ ԵՒ ՁԷՅԹՈՒՆ**

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ — ՍԻՄՈՆ ՅԵԼԷԿԵԱՆԻ

ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԼՈՅՍԻ